ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2020 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 502-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***շահագործող-ջրօգտագործող՝*** իր գյուղատնտեսական արտադրությունը վարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով մեխանիկական եղանակով ոռոգման համար շահագործում է ջրամատակարարի կողմից չշահագործվող համակարգ, և գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն իրականացնում է ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով և (կամ)

անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ոռոգման համակարգից օգտագործում է ոռոգման ջուր.»,

բ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ***ոռոգման ջուր՝*** գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման, ինչպես նաև մեխանիկական ոռոգման համակարգից անասնապահական գործունեության իրականացման համար նախատեսված (օգտագործվող) և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխանող ջուր.»,

գ. 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ***ջրօգտագործող (հետագայում՝ բաժանորդ)՝*** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն իրականացնում է ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով և (կամ) անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ոռոգման համակարգից օգտագործում է ոռոգման ջուր և սահմանված կարգով հանդիսանում է ջրամատակարարի հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած անձ.»,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ ենթակետեր.

«8) ***ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիա՝*** ոռոգման կաթիլային, ենթահողային, շիթային և անձրևացման համակարգեր.

9) ***տիրապետվող անասնագլխաքանակ՝*** փաստացի տիրապետվող անասնագլխաքանակ, ընդ որում անասնագլխաքանակի մեկ պայմանական գլխի հաշվառման գործակիցները հետևյալն են՝ կով, արտադրող ցուլ՝ 1, խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0,66, մանր եղջերավոր կենդանի՝ 0,1, խոզեր՝ 0.3, թռչուն՝ 0.025:»,

3) 3-րդ կետի 2-րդ ենթակետում «մակերեսը» բառից հետո լրացնել «և (կամ) տիրապետվող գլխաքանակը» բառերը.

4) 4-րդ կետում «գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգում» բառերից հետո լրացնել «ինչպես նաև անասնապահական գործունեություն» բառերը.

5) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ոռոգման ջրի ծավալը որոշվում է գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման, ինչպես նաև անասնապահական գործունեության

իրականացման համար մատակարարվող ոռոգման ջրի նորմերի հիման վրա՝ համաձայն աղյուսակի, բացառությամբ 300 կՎտ և բարձր հզորությամբ պոմպակայանների:».

6) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման, ինչպես նաև անասնապահական գործունեության իրականացման համար մատակարարվող ոռոգման ջրի նորմերից և նախարարության կողմից տվյալ համակարգերում հաշվարկված կորուստներից ավել ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:».

7) N N 1, 2 և 3 ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2 և 3 հավելվածների.

8) աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
4.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
5.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Ձև N 1

ՀԱՅՏ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ

1. _____
(շահագործող-ջրօգտագործողի Ա.Ա.Հ., անվանումը, հեռախոսահամարը)

2. _____
(հասցեն)

3. _____
(անձնագրային տվյալները, եթե իրավաբանական անձ է՝ պետական ռեգիստրում գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ծածկագիրը)

4. _____
(հողամասի /անասնաշենքի/ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները)

5. _____
(ջրառ կատարելու տեղանքը, ծավալը)

6. _____
(մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը)

7. _____
(ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը)

8. _____
(տիրապետվող պայմանական անասնագլխաքանակը)

_____ _____
(ստորագրությունը) (շահագործող-ջրօգտագործողի Ա.Ա.Հ., անվանումը)

Կ. Տ. Կ. Տ.

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Ձև N 2

ԱԿՏ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____ ամսվա համար, _____ _____ 20 թ.

Հ/հ	Շահագործող-ջրօգտա-գործողի անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը	Համայնքը, պետական պահուստային ֆոնդը, մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը /անասնաշենքը/	Ոռոգվող գյուղատն-տեսական մշակա-բույսերի ցանկը	Տիրապետվող պայմանական անասնագլխաքանակը	Ոռոգվող հողատարածքը ընդամենը (հա)	Մեկ ամսում մատա-կարար-ված ջրի ծավալը (խ.մ.)	Ջրի արժեքը (ՀՀ դրամ)	Շահագործող-ջրօգտագործողի ստորագրությունը
1								
2								
3								
4								
5								

_____
_____

_____

_____
(ստորագրությունը)

Կ. Տ.

շրջանի վարչակազմի ներկայացուցիչ

_____
(շահագործող-ջրօգտագործող)

_____
(ստորագրությունը)

Կ. Տ.

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՀ _____ ՇՐՋԱՆ
(_____ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)

Տիպերի/ենթատիպերի անվանումը	Այդ թվում												Ընդամենը ենթակայանների քանակը	Ջրի ծախսը ըստ ոռոգման նորմերի ($մ^3$)	Ջրի ծախսը ըստ մատակարարված ջրի ծավալի ($մ^3$)	Ընդամենը էլեկտրաէներգիա (կՎտ)	1խ.մ. ջրի համար ծախսված էլեկտրաէներգիա (կՎտ)	Պոմպի հզորությունը (կՎտ)	Շահագործող-ջրօգտագործողի (բաժա-նորդի) անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը	Մեխա-նիկական եղանակով ոռոգվող տեղանքը	Համայնքը, պետական ադմինիստրատիվ միավորը	Հ/հ
	սուլոյ	կարտոֆիլ	խաղողի այգի	Պղպաստու այգի	բամբակ	կտավատ	տոլմակ	բաղնջարաբաստան	ծխախոտ	սոխ	Արևածաղիկ	եգիպտացորեն	Աշնանացան ցորեն									
																						Ընդամենը

շրջանի վարչակազմի ղեկավար (Ջրամատակարար) _____ _____
(ստորագրություն)

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

Հավելված N 4
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Աղյուսակ

ՆՈՐՄԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ, ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ

Ծովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն

Հ/հ	***Մշակաբույսը***	***Ջրումների քանակը***	***Ջրման նորմը մ³/հա***	***Ոռոգման նորմը մ³/հա***
****1***	Աշնանացան ցորեն և գարի	4	850	3400
2	Եգիպտացորեն	4	750	3000
3	Արևածաղիկ	5	700	3500
4	Կարտոֆիլ (վաղահաս)	5	650	3250
5	Ծխախոտ	12	650	7800
6	Բանջարաբոստանային	16	500	8000
7	Առվույտ	7	900	6300
8	Խաղողի այգի	5	1100	5500
9	Պտղատու այգի	5	1000	5000
10	Բամբակ	5	750	3750
11	Կտավատ	2	800	1600
12	Սոյա	3	600	1800
Արաքսի հովիտ տեղամաս				
1	Խաղողի այգի	10	1100	11000
2	Պտղատու այգի	10	1000	10000

Ծովի մակարդակից 500 -900 մետր բարձրություն

Հ/հ	***Մշակաբույսը***	***Ջրումների քանակը***	***Ջրման նորմը մ³/հա***	***Ոռոգման նորմը մ³/հա***
****1***	Աշնանացան ցորեն և գարի	3	850	2550
2	Եգիպտացորեն	3	750	2250
3	Արևածաղիկ	4	700	2800
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	600	2400
5	Ծխախոտ	10	600	6000
6	Բանջարաբոստանային	12	450	5400
7	Առվույտ	5	900	4500
8	Խաղողի այգի	4	1100	4400
9	Պտղատու այգի	4	1000	4000
10	Կտավատ	1	800	800
11	Սոյա	2	600	1200

Ծովի մակարդակից 900 մետրից բարձր

Հ/հ	***Մշակաբույսը***	***Ջրումների քանակը***	***Ջրման նորմը մ³/հա***	***Ոռոգման նորմը մ³/հա***
****1***	Աշնանացան ցորեն և գարի	2	800	1600
2	Եգիպտացորեն	3	700	2100
3	Արևածաղիկ	3	700	2100
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	550	2200
5	Ծխախոտ	6	550	3300
6	Բանջարաբոստանային	8	450	3600

7	Առվույտ	4	800	3200
8	Խաղողի այգի	-	-	-
9	Պտղատու այգի	3	1000	3000
10	Կտավատ	1	750	750
11	Սոյա	1	600	600

Անասնապահական գործունեության իրականացում

Հ/հ	***Անվանումը***	***Քանակը***	***Օրական մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ³/գլուխ***	***Ամսական կտրվածքով մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ³/գլուխ***
1	Պայմանական անասնագլխաքանակ	1	0,1	3

<u>Ծանոթություն</u> աշնանացան ցորենը և գարին խորքային հորերից ոռոգվելու դեպքում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:» :

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է ոռոգման ժամանակակից համակարգերի կիրառման, մեկ խորքային հորից առավելագույն մակերեսով տարածքներ ոռոգելու, ինչպես նաև ոռոգման համակարգերից անասնապահական գործունեության համար ոռոգման ջուր օգտագործելու դեպքում անասնապահներին աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշմամբ կանոնակարգվում են մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

Կարգի շրջանակներում սուբսիդավորվում էր միայն գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար և ցանկացած տեսակի ոռոգման դեպքում մատակարարվող ոռոգման ջրի դիմաց ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի հիմնական նպատակն է սուբսիդավորել միայն ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներով գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգում իրականացնելու համար մեխանիկական եղանակով մատակարարվող, ինչպես նաև ոռոգման համակարգերից անասնապահական գործունեության իրականացման համար օգտագործվող ոռոգման ջրի դիմաց ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը:

Ակնկալվող արդյունքը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կսուբսիդավորվի միայն ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներով գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգում իրականացնելու համար մեխանիկական եղանակով մատակարարվող, ինչպես նաև ոռոգման համակարգերից անասնապահական գործունեության իրականացման համար օգատգործվող ոռոգման ջրի դիմաց ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժնի և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժին

_____ ***Վ. Բալայան***
(ստորագրությունը)